

Լուսինե ՄԱՂԱԹՅԱՆ
Խ.Արույանի անվան ՀՊՄՀ

**ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ. ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ**

Հողվածի շրջանակներում քննվում է ժամանակի հայեցակարգավորումը փոխանունությունների և փոխաբերությունների միջոցով բրիտանական և հայկական հեքիաթներում: Հեքիաթի տեքստը, լինելով վերացական և մտացածին, կրում է անգիտակցականի ավելի վառ արտահայտված տարրեր և հետազոտության համար անփոխարինելի լեզվանյութ է:

Թե՛ բրիտանական, թե՛ հայկական հեքիաթներից բերված օրինակներով փաստվում է, թե ինչպես է ժամանակ վերացական հասկացությունն արտապատկերվում որպես սուբյեկտ, փարածություն և առարկա: Ավելին՝ ուսումնասիրությունը բերում է այն եզրահանգման, որ ավանդական տոների, կենցաղավարության, գյուղատնտեսական գործունեության, բնության երևույթների, թագավորությունների, սննդի անվանումներ նշող բառամթերքով արտահայտված ժամանակային փոխանունություններն ավելի լայն ընդգրկում ունեն հեքիաթի ժանրում:

Բանալի բառեր. ճանաչողական լեզվաբանություն, հասկացական փոխաբերություն, հասկացական փոխանունություն, հայեցակարգավորում, ճանաչողական կադապարներ, ժողովրդական հեքիաթ

Ճանաչողական լեզվաբանության զարգացումը հանգեցրել է լեզվական երևույթների և մարդկային ճանաչողության միջև առկա կապի ավելի լավ ըմբռնմանը: Ճանաչողական լեզվաբանության ուշադրության կենտրոնում լեզուն է: Այն արտացոլում է ճանաչողությունը՝ հանդես գալով որպես միտք արտահայտելու հիմնական միջոց /Кубрякова, 2004: 42/: Հարկ է նշել նաև, որ հասկացական մակարդակում իմաստի կառուցումը ճանաչողական լեզվաբանության անկյունաքարն է /Fauconnier, 1997: 2/: Էվանսը գտնում է, որ իմաստը սկզբունքորեն արտացոլվում է որպես փորձի մարմնացում /Evans, 2004: 55/: Այսպիսով՝ մենք կարող ենք խոսել միայն այն մասին, ինչն ընկալվում և պատկերացնում ենք, որն էլ համարվում է անհատի ճանաչողական համակարգում կուտակված փորձի արդյունք:

Ճանաչողական լեզվաբանության օգնությամբ հնարավոր է կատարել ժամանակի ավելի ճշգրիտ և հուսալի վերլուծություն: Համաձայն Լա-

կոֆի և Ջոնսոնի՝ ժամանակի ընկալումն ու պատկերումը՝ հայեցակարգավորումը, բացառապես ժամանակային եզրույթներով խիստ սակավաթիվ են: Այն սերտորեն կապակցված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են *տարածությունը*, *նյութը*, *կյանքը*, *իրադարձությունը* և այլն /Lakoff, Johnson, 1999: 127-135/: Ճանաչողական լեզվաբանության ներկայացուցիչների ուսումնասիրություններում առաջ է քաջված այն դրույթը, որ ժամանակի հայեցակարգավորումը մարդու ճանաչողական անգիտակցականի մասն է կազմում: Ըստ այդ դրույթի՝ մարդը ժամանակի մասին խոսելիս ինքնաբերաբար օգտագործում է դրան առնչակից հասկացությունները: Դրանք կազմում են առօրյա հայեցակարգային համակարգի մի մասը (նույն տեղում): Այսինքն՝ ժամանակն արտահայտվում է ճանաչողական համակարգում՝ մարդկային փորձի արդյունքում կուտակված հասկացությունների հիման վրա:

Լակոֆի և Ջոնսոնի մշակած վարկածի համաձայն՝ վերացական հասկացությունները հայեցակարգվում են փոխաբերությունների և փոխանունությունների միջոցով: Ժամանակի արտահայտումը, ըստ նրանց, անհնար է առանց փոխաբերությունների և փոխանունությունների: Դրանք ոչ թե լեզվի, այլ մարդու մտածողության և գործունեության մեջ են /Lakoff, Johnson, 1980: 3/:

Փոխաբերությունը մի երևույթի պատկերումն է մեկ այլ երևույթի միջոցով (այդ երևույթների միջև կա ներքին կամ արտաքին նմանություն, թեկուզ հեռավոր կամ մթազնած), մինչդեռ փոխանունությունն առնչակից երևույթներից մեկի կիրառումն է մյուսի փոխարեն (պարունակողը պարունակյալի փոխարեն, մասը՝ ամբողջի և այլն): Այլ կերպ ասած՝ տիրույթը կամ հասկացությունը գործածվում է որպես աղբյուր, և վերացական տիրույթ հասկացությունը, այս դեպքում՝ ժամանակը, ընկալվում է որպես թիրախ /Ivanová, 2018: 168/: Իսկ փոխանունության դեպքում մեկ տիրույթ է միայն ներգրավված, որն ավելի պարզ է և դյուրըմբռնելի /Velasco, 2001: 49, Lakoff, 1987: 77/:

Մեր հետազոտության շրջանակներում քննության ենք առնելու ժամանակի պատկերումը բրիտանական և հայկական հետևյալ հեքիաթներում՝ «Twenty years with the good people», «The sea-maiden», «The widow's son», «The three advices», «The tale of Conal Crovi», «Jamie Freel and the young lady», «Tops or butts?», «The green children», «The three advices which the king with the red soles gave to his son», «The lady of Llyan y fan Fach», «Whittington and His Cat», «The recovered bride», «Օսկի արտ», «Մոթայի հէքիաթը», «Ոսկէ ծուկը», «Բախտավոր տղա», «Ղըռ-աթ», «Գառնիկ ախպէր», «Դավիթ ջոիկ կը ոսնէ», «Քյաչալն ու քյոսան», «Տան դովաթը», «Ավճի Շաբուրի տղեն», «Դերձակի ախշիկ», «Ջան-փոլատ», «Ջարզանդ թագավորի աղջիկը», «Խիպիկի քոլոզ», «Ռանչպարի տղեն»: Երկու ժողովուրդ-

ների նշված հեքիաթների ընտրությունը պայմանավորված է համանման ժամանակային կառույցների հաճախադիպությամբ:

Ժամանակային տարրի քննությունը կատարվել է հետևյալ մեթոդական հենքի վրա՝ զուգադրական, վերլուծական, ճանաչողական, ռճագիտական:

Վերոնշյալ հեքիաթներում ժամանակի հայեցակարգավորումը դիտարկվում է ճանաչողական լեզվաբանության թիրախային կաղապարների՝ փոխանունության և փոխաբերության լույսի ներքո: Հեքիաթում փոխանունության կիրառության վերաբերյալ կան հակասական մոտեցումներ: Հետազոտողների մի մասը կարծում է, որ հրաշապատում հեքիաթի տեքստը դուրս է մղում փոխաբերությունը, այսինքն՝ տեղի է ունենում ապափոխաբերացում /Добжиньская, 1990: 476-490, Զիվանյան, 2008: 85, Բախտին, 2017: 205/: Սակայն հիմք ընդունելով Ջեյսոնի այն տեսակետը, որ հեքիաթի ժամանակը լինում է երկու տեսակի՝ մարդկային և զարմանահրաշ, կարող ենք պնդել, որ ապափոխաբերացումը առկա է հրաշապատում հեքիաթի զարմանահրաշ ժամանակային գոտում /Jason, 1977: 204-219/: Մինչդեռ իրական ժամանակային գոտում հանդիպում են փոխաբերություններ, որոնք այնքան շատ են կիրառվել առօրյա խոսույթում, որ արդեն դասվել են մարած (dead) փոխաբերությունների շարքին:

Սույն հետազոտության համար ընտրվել են ժողովրդական հեքիաթի մարդկային իրական ժամանակն արտահայտող պատկերացումները: Ճանաչողական լեզվաբանության ուսումնասիրության համար անգնահատելի արժեք են ներկայացնում ժողովրդական հեքիաթները, որտեղ ամփոփված են վաղնջական ժամանակներին առնչվող ժողովրդի մտածողության հնավանդ պատկերացումները /von Franz, 2017: 12, Zipes, 2002: 7/: Ավելին, Դանդեսը գտնում է, որ բանահյուսությունը ժողովրդի սեփական նկարագրությունն է իր մասին /Dundes, 2007: 55/: Հետևաբար հետազոտության համար ընտրված լեզվանյութը մեկ անգամ ևս կրնազօհ լեզվի և ճանաչողության միջև առկա սերտ փոխկապակցվածությունը և կընդլայնի ճանաչողական լեզվաբանության ձեռքբերումները:

Հոդվածում ներկայացված փոխաբերություններն ու փոխանունությունները մարդու ճանաչողության անբաժանելի մասն են կազմում և իրենց անմիջական արտացոլումն են գտնում գեղարվեստական ստեղծագործության նախատեքստային արժեք ունեցող ժողովրդական հեքիաթներում /Lovell-Smith, 2002: 197-214/:

1. Հասկացական փոխաբերություն

Ժամանակի մասին խոսելիս մարդը գերազանցապես հիմնվում է իր հենքային գիտելիքների վրա: Հասկացական համակարգում կուտակված

փորձից ելնելով՝ ժամանակին վերագրվում են այնպիսի բնութագրիչներ, որոնք բնորոշ են սուբյեկտին, առարկային, բնության երևույթներին: Ստորև կներկայագնենք ժամանակի ընկալում պարունակող փոխաբերության օրինակներ՝ բաժանված երեք խմբի: Բերված օրինակներում փոխաբերություն հանդիսացող արտահայտություններն արդեն ծուլվել և դարձել են առօրյա խոսքի բաղադրիչ տարրեր: Սակայն դրանց հիմքում ընկած է փոխաբերության երևույթ, ինչը հիմնավորում է ճանաչողական լեզվաբանության ներկայացուցիչների այն հիմնադրույթը, որ վերացական երևույթների մասին խոսելիս, այս դեպքում ժամանակի, ակամայից օգտագործվում է նյութական առարկաներին հատուկ բառապաշար:

1.1 Ժամանակը որպես շարժվող սուբյեկտ

Ժամանակի ընթացքը շատ հաճախ նույնականացվում է շարժման հետ: Բրիտանական և հայկական հեքիաթներում ժամանակի արտահայտումը կրում է հասկացական փոխաբերության բնույթ:

1. *Weeks, months and years came and went, but he never turned up* /Ashliman, *Twenty years with the good people, 1999-2022/.*
2. Everything happened as the sea-maiden said, and he himself was getting plenty of fish; but when *the end of the three years was nearing*, the old man was growing sorrowful, heavy hearted, while he failed each day as it came /Campbell, *The sea-maiden, 1890: 74/.*
3. Շատ ու քիչ՝ Աստված գիտե, մեկ վախար ու ժամանակ որ անցավ, Մարա երկրի թոռճիքը մեկ օր, առավոտնեն մինչև իրիկուն թոռ քցելով հոգիքը դուրս գուքա, հըմը մեկ ձուկ էլ չեն կռնա բռնե: Իրիկվա դեմ՝ տուն դառնալու վախտը, թոռճու մեկը կըսե /ՀԺՀ 4, Ռանչպարի տղեն, 1963: 129-138/:
4. Տվի,— կըսե դև,— լուրի վաղ՝ ՔԸ՛լի ժամանակ: Ես կէրթամ օլորտիմ. քըզի պատ վիրանք:—Հան դե իմ դռան մոտ օսկոե ճոկան մե կա դրուկ, կը վերցուլս: *Ժամանակ օր կը մոտենա՝* իրեք հաղ բանձր կը թխկթխկցուս, ես դիմնամ՝ օր դու իմ կնիկն իս, ես՝ քոլ իրիկ /ՀԺՀ 10, Խիպիլկի քոլոզ, 1967: 24/:

Երկու ժողովուրդների հեքիաթներից բերված օրինակներում ժամանակին վերագրվում են շարժվելու ունակություն ունեցող սուբյեկտի հատկանիշներ: Շարժման իմաստն արտահայտվում է հետևյալ բայերով՝ *came, went, was nearing, կանցնի, կը մոտենա*: Այս բոլոր բայերը պատկանում են շարժում ցույց տվող բառերի խմբին, որոնք բնորոշ չեն վերացական գոյական *ժամանակին*: Վերը նշված փոխաբերություն պարունակող օրինակներում ժամանակը հայեցակարգվում է որպես շարժվող սուբ-

յեկտ, իսկ դիտորդը (observer)՝ չչարժվող: Ժամանակը այս օրինակներում կարծես թե տարբեր ուղղությամբ շարժվող սուբյեկտ է:

Երկու ժողովուրդների հեքիաթներից բերված օրինակները հիմնավորում են այն վարկածը, որ մարդն իր մտածական համակարգում նյութական առարկաներից կուտակած փորձը կիրառում է վերացական հասկացությունների մասին խոսելիս:

1.2 Ժամանակը որպես տարածություն

Ժամանակը և տարածությունը խիստ առնչակից հասկացություններ են: Ժամանակի մասին խոսելիս հատուկ բառամթերք սովորաբար չի գործածվում: Բառերի և արտահայտությունների շատ քիչ մասն է, որ իրապես ժամանակային են: Ինչպես նշում են Լակոֆը և Ջոնսոնը, մեր ժամանակային ընկալման մեծ մասը տարածության մեջ շարժման փոխաբերացված տարբերակն է /Lakoff, Johnson, 1999: 129/: Ավելին, ճանաչողական համակարգը միջլեզվական բնույթ է կրում /Evans, 2004: 14/: Այս տեսակետի ապացույցը այնպիսի արտահայտություններ են, որոնք հանդիպում ենք և՛ հեքիաթներում, և՛ առօրյա խոսքում (*the length of the day, short/long time, երկար/կարճ ժամանակ*): Սակայն հեքիաթին ավելի բնորոշ են փոխաբերություններ, որտեղ տարածական չափումն արտահայտվում է ժամանակային եզրույթներով:

1. So he went in, and on the morrow she said, "I have a sister who dwells on the road; it is *a walk of a year and a day*, but here are a pair of old brown shoes with holes in them, put them on and thou wilt be there in an instant; and when thou art there, turn their toes to the known, and their heels to the unknown, and they will come home; and so he did /Campbell II, The widow's son, 1890: 313/.

2. Now it happened, towards the end of their *day's journey*, when they were all tired with walking, that they came to a wood, through which there was a path that shortened the distance to the town they were going towards, by two miles /Ashliman, The Three Advices, 2013-2022/.

3. Էսման դինջ ու արխեին Ասլանը էլի էրկու օր ճամբա էկավ, մնացեր էր *մե օրվամ ճամբա* օր հասնիր /ՀԺՀ 4, Ջարգանդ թագավորի աղջիկը, 1963: 100/:

4. -Դե, գնացե՛ք, -ասեց թագավորը իրա նոքարներին, -*իրեք օրավար տեղ վարեք*, կորեկ ցանեք, լավ փոցխեք, թող էս տղեն մին-մին հավաքի /ՀԺՀ 2, Ջան-փոլատ, 1959: 71/:

Օրինակներում տարածությունը չի ստանում թվային բնութագրիչ: Փոխարենը տարածության չափման միավոր է ժամանակը՝ թվային միավորով: Հերոսն իր ճանաչողական համակարգում արդեն ունի պատկե-

րացում, թե որքան տարածք է նա հաղթահարում որոշակի ժամանակահատվածում և այս կուտակված փորձի համաձայն՝ տարածքի երկարության մասին խոսում է ժամանակային եզրույթով: Բրիտանական հեքիաթից բերված օրինակում հերոսը հրաշագործ կոշիկի օգնությամբ մի ակնթարթում հաղթահարում է մի տարվա և մեկ օրվա ոտքի ճանապարհը (a walk of a year and a day): Հաջորդ օրինակում ճանապարհորդության տևողությունը չափվում է օրով (day's journey): Հայկական օրինակում հերոսի անցնելիք ճանապարհի երկարությունը չափվում է մեկ օրով՝ *մե օրվամ ճամբա*: Գյուղատնտեսական աշխատանքի հրահանգ ստացած հերոսը այնքան տարածք պետք է վարեր ու ցաներ, որը կտներ երեք օր՝ *իրեք օրավար տեղ*:

Բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներից քաղված օրինակները ակներև են դարձնում ժամանակի և տարածության միաձույլ համակարգի էությունը:

1.3 Ժամանակը որպես օբյեկտ

Թե՛ բրիտանական, թե՛ հայկական ժողովրդական հեքիաթներում ժամանակ հասկացությունը երբեմն ստանում է նյութական, առարկայական բնութագրիչներ: Այս օրինակներում տեղի է ունենում վերացական հասկացության մասնակի նյութականացում:

1. The king said that he would give any reward to any man that would make out the place where ConalCrovi was taking his dwelling. The king's swift rider said, that if he *could get a day and a year* he would find out where he was. He *took thus a day and a year* seeking for him, but if he took it he saw no sight of ConalCrovi (Campbell, The tale of Conal Crovi, 1890: 130).

2. He *lost no time*, but drew his wife within the ring, within which none of the myriads round dared to enter (Ashliman, The recovered bride, 1999-2022).

3. Ասեց.- Ես Գարրիել հրեշտակն եմ, եկել եմ քո հոգին առնեմ:

Ասեց.- Ես մինուճար եմ. խազնա, դաֆինա տամ իմ ֆոգին մի՛ առնի:

Ասեց. - Թե որ ըղենց ա, ես քեզ *տաս օր ժամանակ կտամ*, քու օթախից մի նշանաբան պըտի տանեմ /ՀԺՀ 3, Դերձակի ախչիկ, 1962: 167/:

4. Տղեն տեսավ, որ ուրիշ ճար չըկա, էլի *իրեք օր ժամանակ ուզեց թագավորեն*, որ մտածե, տեսնի /ՀԺՀ 4, ավճի Շաբուիր տղեն, 1963: 3/:

Վերոնշյալ օրինակներում ժամանակը հայեցակարգվում է իբրև առարկա, որի սեփականատերը ժողովրդական հեքիաթներում թվում է, թե հիմնականում թագավորը կամ հրեշտակն է: Նմանօրինակ փոխաբերության կիրառությանը հավաստում է ճանաչողական լեզվաբանության այն դրույթը, որ ժամանակը մարդը համարում է արժեքավոր իր (valuable

commodity) /Lakoff, Johnson, 1980; Evans, 2004/: Առաջին օրինակում *get* և *take* բայերը, (*get* - ինչ-որ բան ստանալ, *take* - մի բան վերցնել) օգտագործվում են անորոշություն արտահայտող օր և տարի բառակապակցության հետ (*could get a day and a year, took a day and a year*) և ընկալվում է նյութական առարկա, որը հերոսը կարող է խնդրել և ստանալ թագավորից: Երկրորդ օրինակում նույնպես առկա է ժամանակի արժեքային և առարկայական բնույթը, որը հնարավոր է կորցնել (*lost no time*): Հայկականում՝ Գաբրիել հրեշտակը մարդու կյանքի օրերը վերահսկելու իրավունքով *դաս օր ժամանակ է տալիս* կյանքից հեռանալ չցանկացող հերոսին: Հաջորդ օրինակում՝ հերոսը երեք օր ժամանակ է խնդրում թագավորից և ստանում է: Բառային այս միավորների համատեղ կիրառությունը ժամանակին հաղորդում է սեփական օբյեկտի հատկանիշ:

Այսպիսով՝ տարբեր ժողովուրդների պատկանող այս երկու հեքիաթներում ժամանակի հասկացության հայեցակարգավորումը համարժեք է, երբեմն էլ նույնական: Այն արտապատկերվում է անհատի մտածական համակարգում ունեցած առարկաների, նրանց շարժման, տարածության մասին ունեցած մտապատկերների միջոցով: Անկախ ազգերի գրականության զարգացումից՝ ժամանակը շարունակում է հայեցակարգվել որպես շարժում ունեցող սուբյեկտ, տարածություն և առարկա, որն արտահայտում է շրջապատող միջավայրի, բնության նկատմամբ մարդկության ընկալումները: Իսկ ցանկացած ժողովուրդի գրականության նախահիմք հեքիաթում ժամանակի փոխաբերությունը ստացել է առավել վառ դրսևորում:

2. Հասկացական փոխանունություն

Փոխանունությունը ճանաչողական լեզվաբանության իմաստ արտահայտելու մեխանիզմներից մեկն է: Այն ենթադրում է մի տարրի կիրառումը մեկ ուրիշի փոխարեն: Սակայն փոխանունությունը ոչ թե պարզապես փոխարինում է մեկ ամբողջությունը մեկ այլով, այլ փոխկապակցում է դրանք՝ ձևավորելով նոր, բարդ իմաստ /Radden, Kövecses, 1999: 2/:

2.1 Ավանդական տրոները որպես ժամանակ

Ժողովրդական հեքիաթներում հոգևոր տոները երբեմն օգտագործվում են օրացուցային ժամանակի փոխարեն:

1. So a year passed, and *Halloween* came round again /Ashliman, Jamie Freel and the young lady, 1999-2022/.
2. Հանեց ջեպիցը մի մանեթ փող բախշեց: - Ասեց.- Աղա՛, ես պըտի էթամ, քեզանից շնորհակալ եմ:

- Որդի՛,- ասեց,- Մի՛ էթա, կա՛ց, զատկից ետը գնա /ՀԺՀ 3, Տան դովաթը, 1962: 172/:

Բրիտանական «Jamie Freel and the Young Lady» հեքիաթի ամբողջ պատումում ժամանակը պատկերվում է *Halloween* ավանդական տոնի միջոցով: Այն հին կելտական հոգևոր տոնախմբություններից է, որը նշվում է հոկտեմբերի 31-ին: Այստեղ ասացողը խուսափում է թվային բնութագրիչով արտահայտել ժամանակը և այն արտահայտում է *Halloween* ծեսի միջոցով: Համաձայն ճանաչողական լեզվաբանության դրույթների՝ ենթադրվում է, որ լսողը իր մտածական պատկերում արդեն ունի հստակ գաղափար այս տոնի վերաբերյալ և *Halloween* ծեսը կընկալի իբրև հստակ ժամանակահատված, որն ընդգրկում է հոկտեմբեր ամսվա վերջը: «Տան Դովաթը» հայկական հեքիաթում տերը ծառային առաջարկում է չչտապել և գնալ *Ջարկից* հետո, որը հայկական եկեղեցու շարժական տոներից է և միշտ նշվել է գարնանը: Ե՛վ բրիտանական, և՛ հայկական հեքիաթներում ասացողները տարվա ժամանակահատվածը արտահայտում են տոներով: Քանի որ հեքիաթի տեքստը փոխանցվում է բերանացի և զուտ ասացողի հիշողությամբ, ժամանակի՝ թվային բնութագրիչներով արտահայտումը դառնում է ոչ կիրառելի:

2.2 Գյուղատնտեսական գործունեությունը որպես ժամանակահատված

Գյուղատնտեսական փուլերը հնագույն սյուժեներում հաճախ են արտացոլվել, քանի որ հասարակ գյուղացու համար կենսական կարևորություն ունեցող առօրյայի անբաժանելի մասն են կազմել, ինչն էլ պատկերվել է հեքիաթում իբրև ժամանակի հիմնական փոխանունություններ:

1. The time for the *reaping match* arrived /Folk-tales of the British Isles, Tops or butts?, 1987: 112/
2. They came in *harvest-time* out of the Wolf-pits; they both lost their green hue, and were baptised, and learned English /Hartland, The green children, 2018: 101/.
3. Յորենը շատ լավ եղավ, *հնձելու ժամանակը* հասավ /ՀԱԲ 16, Քյաչալն ու քյոսան, 1984: 86/:

Բերված օրինակներում՝ 1, 2, ժամանակի չափման միավոր դառնում է գյուղատնտեսական գործընթացները: *Harvest* գոյականը ինքնին ունի ժամանակային բնութագիր. այն ենթադրում է տարվա մի հատված, երբ դաշտերից բերք են հավաքում (համաձայն Cambridge Dictionary-ի), իսկ *reaping-ը* նշանակում է *բերքը հավաքել, քաղել*: Այն լրացնում է *match* գոյականին, որի առաջնային իմաստը մրցույթն է: Բայց *match*-ն այստեղ այս իմաստը չի կրում. այն հանդես է գալիս փոխանվանաբար: *Բերքահավաք* (*reaping*) և *մրցույթ* (*match*) բառերից կազմված բառակապակցությունը հանդես է

գալիս ժամանակային փոխանունություն, և ենթադրվում է, որ լսողի հենքային գիտելիքները նրան ուղղորդում են *աշուն*: Հայկական օրինակում հենքային գիտելիքները հիմք են դառնում, որ «հնձելու ժամանակ» փոխանունությունն ընկալվի իբրև հուլիս ամիս, քանզի Հայաստանում ցորենը հիմնականում այդ ժամանակ է հասունանում:

2.3 Կենցաղավարությունը որպես ժամանակահատված

Լինելով վաղնջական տեքստ՝ հեքիաթի ժանրին հատուկ է նաև ժամանակի պատկերումը կենցաղավարության պարզ երևույթների միջոցով: Պատումային ժանր՝ հեքիաթում, օրը բաժանվում է ըստ ուտելիքը ընդունելու հատվածների: Եվ քանի որ ժամացույցով ժամանակի չափման ներկայիս տարաբնույթ միջոցները կիրառելի չի եղել, կենցաղի կարևորագույն իրադարձությունները կիրառվել են իբրև ժամանակային ցուցիչներ, որոնք էլ իրենց հերթին դարձել են փոխանունություններ:

1. When he arrived, he found that they were *at dinner*, and several neighboring families with them in the great hall /Ashliman, The three advices which the king with the red soles gave to his son, 2013-2022/.

2. Շոգ օր կեղնի, մեկ կր լողկնան, մեկ գելնան պարկին վըր ավղին: *Ճաշի վախտ*՝ կանոթնան /ՀԺՀ 10, Դավիթ ջոիկ կը ոսնե, 1967: 449/:

3. Ժամահարը *քերուայ ժամը տալու վախտին* գալիս ա թագաւորին կանչում /Նահասաարդեանց, Գառնիկ ախպէր, 1882: 20/:

Նշյալ օրինակներում՝ *at dinner*, *ճաշի վախտ*, *քերուայ ժամը տալու վախտին* արտահայտությունները ժամանակային փոխանունություններ են: Ե՛վ բրիտանական, և՛ հայկական հեքիաթներում հաճախ են հանդիպում ժամանակային փոխանունությունների օրինակներ՝ արտահայտված կերակուր ընդունելու ժամանակամիջոցով՝ 1, 2: Երրորդ օրինակում հոգևոր ծիսակարգը որպես ժամանակի ցուցիչ է: «Գառնիկ ախպէրը» հեքիաթում հերոսը թագավորի մոտ է գնում եկեղեցու գիշերվա զանգի հնչելու ժամանակահատվածում: Այստեղ ժամանակը հայեցակարգվում է զանգի հնչելու արարողակարգով: Առաքելական եկեղեցու կանոնակարգին համաձայն՝ երեկոյան զանգը հնչում է մայրամուտից առաջ: Արևը մայր է մտնում 5:00-7:00 ընկած ժամանակահատվածում, ուստի ենթադրվում է, որ հերոսը թագավորի մոտ գնում է հենց այդ ժամանակահատվածում:

Այս ենթախմբում ուշադրության են արժանի նաև այնպիսի օրինակներ, որտեղ ժամանակը հայեցակարգվում է սննդային խմբին պատկանող բառամթերքի կիրառությամբ: Ստորև դիտարկենք բրիտանական

հեքիաթից վերցված երկու դրվագ, որտեղ սնունդ արտահայտող բառերը փոխարինում են ժամանակային ընթացքին:

1. I myself was the first that met them; and by thy hand, oh, King of Eirinn, and by my hand, were it free, if I was not in a somewhat harder case, when *the steak was coming out of me*, than I am to-night under thy mercy, with a hope to get out /Campbell, The tale of Conal Crovi, 1890: 138/.

2. When the men who were above had filled themselves full of *meat and drink*, it was then that the king thought of sending word down for Conal Crovi to tell a tale /Campbell, The tale of Conal Crovi, 1890: 133/.

Հեքիաթի հերոսի համար թագավորի ողորմությանը սպասելու ժամանակահատվածը այդքան էլ դժվար չէ. նա իր կյանքում ունեցել է ավելի ծանր օրեր, որոնք փոխանվանաբար ներկայացվում են սննդային բառով (*the steak was coming out of me*): Այս արտահայտությունը գրեթե համարժեք է հայերեն հետևյալ դարձվածքին՝ *միսը բերանը տալ՝ չարչարել, խոշտանգել* (համաձայն *Հրաչյա Աճառյանի ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի*): Սակայն անգլերենում *the steak was coming out of me* արտահայտությունը դարձվածք չէ: Հաջորդ օրինակում *meat and drink* սննդային միավորները ժամանակի բնութագրիչներ են: Քորնել Քորվին նետել էին անասնագոմ: Այնտեղ նա սպասում էր թագավորի ողորմությանը: Քորվին անասնագոմում մնում է այնքան, մինչև թագավորը և նրա որդիները հագնում են մսով և խմիչքով (*had filled themselves full of meat and drink*): Միայն դրանից հետո են կանչում Քորվինին: Կարող ենք ենթադրել, որ Քորնել Քորվինին դուրս են կանչում երեկոյան, քանի որ միսը և խմիչքը ավելի հաճախ գործածվում են ընթրիքի ժամանակ:

Ի տարբերություն բրիտանականի՝ հայկական հեքիաթներում հաճախ ժամանակին անդրադառնալիս օգտագործվում է *հաց* բառը:

— Գելնիս էս սարի գլոխը, էնտեղ իրեք հատ ղովտ կան, մեկ էլ մե մերմ ունին: Հիմի էն ղովտերը քընած կեղնին, *հացի վախար* պըտի էղնի օր հ'ելնին հաց ուտեն: Դու կերթաս,— կըսե,— էդ ղովտերի քովը կրակ կը վառի, էդ կրակի վրա դրած է մե մենձ մայա պղինձ՝ էդ պղնձի մեշը օխտը հատ օջխար կա լըցած, կէփեն օր էդ ղովտ տղեքը հ'ելնին ուտեն /ՀԺՀ 4, Դըռ-աթ, 1963: 54/:

Սարի գլխին ապրող դևերն արթնանում են միայն *հացի վախար* (ժամանակ): Հեքիաթում հստակ չի նշվում, թե որ ժամին են արթնանում, սակայն հասկացական փորձից ենթադրվում է, որ խոսքն առավոտվա, կեսօրվա և երեկոյի մասին է: Ուշադրության է արժանի *հաց* սննդային բառի կիրառությունը: Հայոց մշակույթում, հետևաբար և հայկական ժողովրդական հեքիաթներում հաճախադեպ է *հաց* բառի կիրառությունը որպես սնունդ ընդունելու ժամանակամիջոցի արտահայտություն (սրա մոտավոր համարժեքը անգլերենում *meals* բառն է), քանզի հայի համար

հացն ընկալվում է իբրև գոյության հիմք, և հայ իրականության մեջ ոչ մի ուտեստ առանց հացի չի մատուցվում: «Բախտավոր տղա» հայկական հեքիաթից բերված օրինակում՝ ժամանակն արտահայտվում է սննդային հիմք ունեցող դարձվածքով:

Երբոր էդ էրկու ընկերն հագրվան իրանց երկիրն էրթալու, աղշիկ առնող տղեն ըսավ,— Ախր մենք իրար հետ բեռներով *աղ ու հաց ենք կերել*, մեր էն մեկել ընկերին, աստված ինչըղ դաբուլ կենե, օր թողնենք ըստեղ խեղճ ու աղքատ, ու մենք ըսման փառքի հասած էրթանք մեր տները /ՀԺՀ 4, Բախտավոր տղա, 1963: 160/:

Փառքի հասած երկու ընկերները չեն ուզում թողնել թագավորից ոչինչ չստացած իրենց ընկերոջը: Նրանք անցյալին անդրադառնալով են կատարում *աղ ու հաց ենք կերել* դարձվածքով, որը նշանակում է սերտ բարեկամություն անել (Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան): Դարձվածքի իմաստը սննդային հիմքից որոշակիորեն հեռացած է, բայց խորքում նշմարվում են սննդային փոխանունությունը, որոնց միջոցով հեքիաթում անդրադարձ է կատարվում անցյալի մի ժամանակահատվածի, որը հագեցած է եղել բարեկամական հարաբերություններով:

2.4 Բնության երևույթները որպես ժամանակ

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև ժամանակահատվածի պատկերումը բնության երևույթներով:

1. When *lateness came* (in the evening), and when he took (them) home they had not much milk, the place was so bare, and his meat and drink was but spare this night /Campbell, The sea-maiden, 1890: 76/.
2. The sheep and goat browsed on the steep sides of the Fan; the cows strayed amongst the rocks and boulders; *rain and sunshine came and passed away*. But all were unheeded by the youth, so impelled by love was he /Folk -tales of the British Isles, The lady of Llyan y fan Fach, 1987: 83/.
3. Էթում են էթում, շատն ու քիչն Աստօժ գիտյ՝մի մէշի դրադի *մութը վրա ա հասնում* /Նախասարդեանց, Ոսկէ ձուկը, 1882: 30/:
4. Առաւօտը՝ դեռ *լիս ու մութը չքաժանուած*, էս մարդը վեր ա կենում տենում՝ Ֆորի միջիցը մի նոցի ձէն ա գալի /Նախասարդեանց, Մոթալի հէքիաթը, 1882: 47/:

Բերված օրինակներում *lateness* գոյականը ժամանակային եզրույթ չէ, բայց ունի *օրվա ավարտ* նշանակությունը (համաձայն CD-ի), և ընթերցողի մոտ ձևավորում է *երեկոյի* պատկերացում: Նույն մեկնաբանությունը ունի նաև երրորդ օրինակի *մութը* բառը: Լինելով գիշերվա բնութագրիչներից՝ *մութ* բառը հայկական հեքիաթներում հաճախ կիրառվում է

փոխանվանաբար: Երկրորդ օրինակում բնության երևույթների հիշատակումը (*rain and sunshine came and passed away* - անձրևը և արևի շողալը) ապահովում է տարվա, ամիսների, երկար ժամանակահատվածի անցում: Ուշագրավ է նաև չորրորդ օրինակի՝ *իս ու մութը չբաժանուած* արտահայտությունը, որ տալիս է աղջամուղջի պատկերավոր նկարագիրը: Ներկայացված օրինակներում կա նաև փոխաբերության և փոխանունության համաժամանակյա կիրառություն: Բնության երևույթները (*lateness, rain and sunshine, մութ*) հանդես են գալիս օրվա, տարվա ժամանակի փոխարեն, և այդ ժամանակն էլ արտապատկերվում է որպես շարժվող սուբյեկտ (*came, came and passed, վրա ա հասնում, չբաժանուած*):

2.5 Թագավորությունը որպես ժամանակ

Ժողովրդական հեքիաթներում երբեմն թագավորի և նրա թագավորության ժամանակաշրջանի վկայակոչմամբ սկսվում է պատումի նկարագրությունը: Ունկնդիրը կամ ընթերցողը, իր հենքային գիտելիքներից ելնելով, հասկանում է, որ պատումը շատ հեռավոր անցյալի մասին է:

In the reign of the famous King Edward III there was a little boy called Dick Whittington, whose father and mother died when he was very young /English Fairy Tales, Whittington and His Cat, 1890: 167/.

Վերոնշյալ և՛ բրիտանական, և՛ հայկական հեքիաթների սկսվածքներում պատմական իրական կերպարների թագավորությունները ժամանակային փոխանունություններ են: Իրական պատմական կերպարի՝ Էդվարդ Երրորդի, հիշատակմամբ թվում է, թե պատումը իրական փաստերի շուրջ է հյուսվելու: Սակայն սա մի հետաքրքիր հնար է: Ասացողը, պատմական ժամանակը նշելով, ակնկալում է, որ ունկնդիրը կհավատա նկարագրվող իրադարձությունների ճշմարտացիությանը: Ավելին, այդ ազդեցությունն ուժեղացնելու համար հերոսը ներկայացվում է անձնանունով (Dick Whittington): Հիմնականում անձնանունների ընդգրկումը հեքիաթներում հենց այս միտումն ունի:

Հաջորդ օրինակում պատմական իրական կերպարի փոխարեն առասպելական հերոսի թագավորությունն է ժամանակային փոխանունություն:

When good King Arthur reigned, there lived near the Land's End of England, in the county of Cornwall, a farmer who had one only son called Jack (English Fairy Tales, Jack the Giant-Killer, 1890: 99).

Ասացողը հեքիաթը սկսում է հստակ ժամանակաշրջանով և շարունակում է որոշակի իրադարձությունների նկարագրումը: Եթե նախորդ օրինակը վերաբերում էր շատ հեռավոր իրական անցյալին, ապա այս օրինակում հենց Արթուր թագավորի (առասպելական թագավոր) անվան

կիրառությամբ ասացողը պատրաստում է անհրական իրադարձություններ ունկնդրելուն:

Հայկական հեքիաթներն առանձնանում են բրիտանականից դրանով, որ հայ ժողովրդական հեքիաթներում հազիվ թե հնարավոր է հանդիպել իրական պատմական կերպարների թագավորությունների կիրառությամբ ժամանակային փոխանունությունների: Հայկական ժողովրդական հեքիաթներում ներառված են հիմնականում մտացածին թագավորների կամ իշխանների անուններ:

Պռոշ թագավորի օրով էրկու գրկեց կապրեն /ՀԺՀ 10, Օսկի արտ, 1967: 235/:

Վերոնշյալ օրինակում *Պռոշ թագավորի օրով* արտահայտությունը ժամանակային փոխանունություն է: Սակայն հայ իրականության մեջ Պռոշ անունով թագավոր չի եղել, 13-րդ դարում Պռոշ անունով իշխան է եղել /Մկրտչյան, Սահակյան, 2011: 40/: Սա ևս մեկ այլ հնար է ասացողի կողմից: Նա կարծես թե փորձում է իրականության պատկեր ստեղծել, բայց միևնույն ժամանակ ոչ այդքան էլ ճշմարտացի տեղեկությունով ազատում է իրեն պատասխանատվությունից:

Այսպիսով, ճանաչողական լեզվաբանության դրույթներով ուսումնասիրելով բրիտանական և հայկական հեքիաթներում ժամանակի հայեցակարգավորումը, հանգում ենք այն եզրակացության, որ հեքիաթում ժամանակը գերազանցապես արտահայտվում է փոխաբերություններով և փոխանունություններով: Քանի որ հեքիաթում ամեն ինչ վերացական է և մտացածին, չկա հստակ անձնավորված կերպար, տեղ և ժամանակ, հետևաբար հեքիաթում ժամանակին անդրադարձ է կատարվում մեծ մասամբ ճանաչողական կաղապարներով: Ժամանակը արտապատկերվում է այնպիսի հատկանիշներով, որոնք բնորոշ են շարժվող սուբյեկտին, տարածությանը և առարկային: Ի տարբերություն փոխաբերության՝ հասկացական փոխանունությունն ավելի լայն տարածում ունի հեքիաթի ժանրում: Դրա լայն կիրառությունը հեքիաթի պատումը դարձնում է ավելի արտահայտիչ և պատկերավոր: Ժամանակի արտահայտումը ավանդական տոների, կենցաղավարության, գյուղատնտեսական գործունեության, բնության երևույթների, թագավորությունների, սննդային բառամթերքին պատկանող եզրույթներով բնավ խորթ չէ այս ժանրին: Այս միավորների կիրառությունն իբրև ժամանակի արտահայտման ցուցիչներ թերևս բացատրվում է նրանով, որ դրանք կազմել են հնօրյա հանրության կենցաղի անբաժանելի մասը և այս ամենի արտացոլումը տեսնում ենք հնագույն սյուժեներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հողվածում ներառված են օրինակներ, որոնք բերված են էլեկտրոնային շտեմարանից (էջերը առկա չեն): Շտեմարանի հավաքագրումը սկսել է ամերիկացի բանահավաք և գրող Դ. Աշլիմանը: Հավաքագրումը շարունակական բնույթ է կրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Dundes, A. (2007). *The Meaning of Folklore*. Edited and Introduced by Simon J. Bronner. Utah: Utah State University Press Logan.
2. Evans, V. (2004). *The Structure of Time. Language, meaning and temporal cognition*. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company.
3. Fauconnier, G. (1997). *Mappings in thought and language*. US: Cambridge University Press.
4. Ivanová, M. (2018). Metaphor and metonymy in cognitive linguistic theory: On the basis of evidential adverbs and their semantic extensions. *World Literature Studies*, 10.
5. Jason, H. (1977). *Ethnopoetry. Form, content, function*. W. Germany: Linguistica Biblica Bonn.
6. Lakoff, G., Johnson, M. (1980). *Metaphors we live by*. Chicago: The University of Chicago Press.
7. Lakoff, G., Johnson, M. (1999). *Philosophy in the flesh; the embodied mind and its challenge to western thought*. New York: Basic Books.
8. Lakoff, G. (1987). *Women, fire, and dangerous things*. Chicago and London: The University of Chicago Press.
9. Lovell-Smith, R. (2002). Anti-housewives and ogres' housekeepers: the roles of bluebeard's female helper. *Folklore*, 113.
10. Radden, G., Kövecses, Z. (1999). *Towards a Theory of Metonymy*. Budapest: John Benjamins Publishing Company, DOI:10.1075/hcp.4.03rad.
11. Riordan, J. (1987). *Folk-Tales of the British Isles*. Moscow: Raduga.
12. Velasco, D. (2001). Metaphor, Metonymy, and Image-Schemas: An Analysis of Conceptual Interaction Patterns. *Journal of English Studies*, 3, 2001-2.
13. von Franz, M.-L. (2017). *The Interpretation of Fairy Tales*. Colorado: Shambhala.
14. Zipes, J. (2002). *Breaking the Magic Spell. The United States of America: The University Press of Kentucky*.
15. Добжиньская Т. (1990). Метафора в сказке. *Теория метафоры*. Москва: Прогресс.

16. Кубрякова Е. (2004). Язык и знание: На пути получения знаний о языке: Части речи с когнитивной точки зрения. Роль языка в познании мира. Москва: Языки славянской культуры.
17. Բախտին, Մ. (2017). Ժամանակի և քրոնոտոպի ձևերը վեպում, Երևան, Անտարես:
18. Բեդիրյան, Պ. (2011). Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն, Երևան:
19. Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հ. 16, (1984), Երևան, Հայկական ՍՍՀ հրատարակչություն:
20. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 10, (1967), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
21. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 2, (1959), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
22. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 3, (1962), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
23. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 4, (1963), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
24. Նախասարդեանց, Տ. (1882). Հայ ժողովրդական հեքիաթներ, Վաղարշապատ, ՌՅԼԱ:
25. Զիվանյան, Ա. (2008). Հրաշապատում հեքիաթի պոետիկան. համեմատությունը հեքիաթի համատեքստում (հայկական հեքիաթի նյութի հիման վրա), բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ashliman, D. (1999-2022). Abducted by Aliens. <https://sites.pitt.edu/~dash/abduct.html> (Retrieved January 20, 2022).
2. Ashliman, D. (2013-2022). Folktales of Aarne-Thompson-Uther. <https://sites.pitt.edu/~dash/type0910b.html> (Retrieved January 15, 2022).
3. Cambridge Dictionary. <https://dictionary.cambridge.org/dictionary/english/> (Retrieved April 20, 2022).
4. Campbell, J. (1890). Popular tales of the West Highlands, v. 1. <https://www.sacred-texts.com/neu/celt/pt1/index.htm> (Retrieved January 15, 2022).
5. Edward III King of England. In *Britannica*. <https://www.britannica.com/biography/Edward-III-king-of-England> (Retrieved April 25, 2022).

6. Halloween. In *Britannica*. <https://www.britannica.com/topic/Halloween> (Retrieved April 15, 2022).
7. Jacobs, J. (1890). English Fairy Tales, <https://www.sacred-texts.com/neu/eng/ef/ef32.htm> (Retrieved January 20, 2022).
8. Hartland, E. (2018). English fairy and other folk tales. Grey eBook, <https://www.globalgreybooks.com/english-fairy-and-other-folk-tales-ebook.html> (Retrieved January 15, 2022).
9. Ի՞նչ է ժամերգությունը, http://ter-hambarzum.net/%D5%AB%D5%9E%D5%B6%D5%B9-%D5%A7-%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/?fbclid=IwAR2cNfykaGM3r27naqyHCu91HuBOF26_OLZljIjt5Q2NIBju9Z5vAPpaKzI (մուտք՝ ապրիլ 20, 2022):
10. Սուրբ Զատիկ, Հայաստանի հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն, <http://smn.am/%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%A6%D5%A1%D5%BF%D5%AB%D5%AF/> (մուտք՝ ապրիլ 22, 2022):

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Մկրտչյան Ն., Սահակյան Վ. (2011). Տեղանունների համառոտ բացատրական բառարան, Երևան, Անտարես:

Л. МАДАТЯН – Концептуализация времени в британских и армянских народных сказках: метафора и метонимия. – В статье представлена концептуализация времени посредством метонимии и метафоры в британских и армянских сказках. Сказка как образный и вымышленный текст содержит в себе некоторые аспекты бессознательного и образного воспроизведения и считается ценным материалом для научного исследования.

Исследование британских и армянских сказок показывает, что абстрактное понятие времени метафоризируется в качестве субъекта, пространства и объекта. Более того, в качестве метонимии в жанре народной сказки широко используются обряды, быт, сельскохозяйственная деятельность, природные явления, продукты питания и названия царств.

Ключевые слова: когнитивная лингвистика, концептуальная метафора, концептуальная метонимия, концептуализация, когнитивные механизмы, народная сказка

L. MADATYAN – *Conceptualization of Time in British and Armenian Folk Tales: Metaphor and Metonymy.* – The paper deals with the conceptualization of time with metonymies and metaphors in British and Armenian folk tales. Folk tale text as an imaginative and fictitious phenomenon carries some vivid aspects of unconscious and is considered to be a valuable material for linguistic research.

The examples under analysis illustrate that in both British and Armenian folk tales the abstract concept of time is metaphorized as subject, space, and object. Moreover, the study shows that rituals, lifestyles, agricultural activities, natural phenomena, food products, and names of kingdoms are widely used as metonymies in the folk tale genre.

Key words: cognitive linguistics, conceptual metaphor, conceptual metonymy, conceptualization, cognitive mechanisms, folk tale

Received: 10.09.2022

Revised: 30.11.2022

Accepted: 12.12.2022